ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՈՒՂԵՆԻՇ

Ա. Պ. ՍԻՄՈՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

Կան պատմական իրադարձություններ, որոնք դիմանալով ժամանակի ահեղ փորձությանը՝ գնալով ավելի ու ավելի ուժեղ են ազդեցություն գործում հասարակական զարգացման էական կողմերի վրա։ Սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական աննախադեպ նվաճումներով այնքան հարուստ XX դ. մեծագույն իրադարձություններից մեկը, հիրավի, բոլշևիզմի առաջացումն էր, Ռուսաստանում նոր տիպի մարքսիստական կուսակցության ստեղծումը, կուսակցություն, որին բախտ էր վիճակված մեր երկրի ժողովուրդներին առաջնորդել աշխարհի կոմունիստական վերափոխման տակավին չտրորված անծանոթ ուղիներով։ Կոմունիստական կուսակցության փառապանծ պատմության մեջ կարևոր ուղենիշ, շրջադարձային կետ է ՌՍԴԲԿ II համագումարը, որը ձևավորել է բոլշևիզմը և որի 70-ամյակը բոլորեց այս օրերին։

Մի կողմից ճորտատիրության վերացումը, էժան բանվորական ուժը, մյուս կողմից՝ երկրի անսպառ բնական հարստությունները, անցյալ դարի 70—80-ական թվականներից սկսած, Ռուսաստանում խթանեցին կապիտալիզմի զարգացումը։ Սկզբնապես հանդես գալով Արևմուտքի հետ համեմատաբար աշխույժ գործարար կապերով օժտված կենտրոնական շրջաններում, այն դարավերջին իր ոլորտի մեջ ընկալեց նաև բազմացեղ ու բազմալեզու ժողովուրդների օրրան Ռուսաստանի ծայրամասերը, քանդելով մարդկանց միջև դարեր շարունակ հաստատված ավանդական հարաբերությունները։ Կապիտալիզմի զարգացմամբ այդ հսկա երկրում սկսեցին արմատական տեղաշարժեր կատարվել։ Ստեղծվեց կապիտալիստական ապրանքային տնտեսություն, որի արտադրանքը «ձգտում էր» դուրս գալ «ազգային շուկայի» նեղ կապանքներից։ Տնտեսության մեջ փոփոխությունները իրենց արտացոլումը գտան վերնաշենքում։ Ֆեոդալվածատիրական վերնախավի վրա հենվող ցարական բռնապետությունը համառորեն ընթանում էր դեպի սերտ մերձեցում արդյունաբերական խոշոր բուրժուազիայի հետ, հանձին նրա տեսնելով երկրի ներսում հեղափոխական շարժումները ճնշելու և Եվրոպայի ժանդարմի իր դերը կատարելու հզոր հենարան։ Սակայն կապիտալիստական արտադրության ծավալման հետ մեկտեղ ձևավորվում էր երկրի պրոլետարիատը, հասակ էր առնում ռուսական սոցիալ-դեմոկրատիան, առաջանում էին հոծ զանգվածներով բանվորական կենտրոններ։ Այս գործոններն, ի վերջո, ձեռք բերեցին մի այնպիսի վիթխարի ուժ, որ բուրժուականացող ռազմա-ֆեոդալական ռեժիմը, թեև հեղափոխության դեմ պայքարելիս միջոցների խտրություն չէր դնում, բայց ի զորու չգտնվեց թեկուզ ժամանակավորապես չեզոքացնելու նրանց ազդեցությունը հեղափոխական շարժման ընթացքի վրա։ Դեռ ավելին. իմպերիալիզմին անցնելու փուլում, XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին, միջազգային հեղափոխական շարժման կենտրոնը Արևմտյան Եվրոպայից տե-

զափոխվեց Ռուսաստան, որի հետևանքով էլ այն ստանձնեց միանգամայն նոր դեր՝ կապիտալի դեմ համայն աշխարհի աշխատավորների պայքարում։

Ռուսաստանի ժողովուրդների ազատագրության խնդիրը զբաղեցրել է հեղափոխական շարժման ոչ քիչ թվով գործիչների։ Դեկաբրիստներից մինչև ռազնոչին հեղափոխականները, հեղափոխական դեմոկրատներից մինչև հեղափոխական նարոդնիկները՝ ազատագրական շարժման միմյանց հաջորդող ամբողջ սերունդներ քիչ զոհեր չեն տվել ցարիզմի դեմ մղվող պայքարում, սակայն էական արդյունքների չեն հասել. Ռուսաստանը մնացել է որպես «ժողովուրդների բանտ», եվրոպական ու ասիական ռեակցիայի անսասան հենարան։

Ռուսաստանում պրոլետարիատի հանդես գալը, բանվորական շարժման վերելքը և գիտական սոցիալիզմի տարածումը արմատապես փոխեցին իրադրությունը. հնարավոր դարձավ ստեղծել մարքսիստական կուսակցություն, բանվորական շարժման մեջ մտցնել գիտակցականություն և կազմակերպվածություն, այն դուրս բերել դասակարգային քաղաքական պայքարի ուղի, օրակարգի մեջ դնել պրոլետարիատի պայքարի գլխավոր հարցը՝ իշխանության հարցը։ Մարքսիզմի պրոպագանդման, ռուսական սոցիալ-դեմոկրատիան տեսականորեն նախապատրաստելու, դասակարգային պայքարում պրոլետարիատի շահերը առաջին պլանի վրա քաշելու գործում մեծ դեր խաղաց 1883 թ. Գ. Վ. Պլեխանովի ստեղծած «Աշխատանքի ազատագրության» խումբը։ Բայց այն կատարեց միայն առաջին քայլերը։

Ռուսաստանում բանվորական հեղափոխական շարժման տեսական ու պրակտիկ հարցերը, որոնք պետք է ապահովեին անցումը դեպի սոցիալիզմ, առաջին անգամ գիտական հիմնավորում գտան Վ. Ի. Լենինի աշխատություններում։ Վ. Ի. Լենինն առաջինն էր, որ որպես բանվորական շարժման անհետաձգելի խնդիր և նրա հաջողության կարևորագույն պայման առաջ քաշեց նոր տիպի մարքսիստական կուսակցություն ստեղծելու հարցը։ Տակավին 1894 թ. «Ո՞վքեր են «ժողովրդի բարեկամները» և ի՞նչպես են նրանք մարտընչում սոցիալ-դեմոկրատիայի դեմ» աշխատության մեջ Վ. Ի. Լենինը հրստակորեն ցույց տվեց, որ ռուսական մարքսիստները պետք է ստեղծեն իրենց հեղափոխական կուսակցությունը, որը կոչված է տարերային, մեկը մյուսից անջատ, ընդհանուր նպատակից զուրկ բանվորական շարժումները միավորել ցարիզմի և կապիտալիզմի դեմ բանվոր դասակարգի կողմից մղվող միասնական պայքարի մեջ։ Ռուսաստանի պրոլետարիատի առջև ծառացած խնդիրների դժվարությունը և միջազգային բնույթը նկատի ունենալով՝ Վ. Ի. Լենինը գտնում էր, որ այդ կուսակցությունը պետք է լինի նոր տիպի, որ ռուսական մարքսիստները չեն կարող «օգտվել պատրաստի օրինակներից»։ Վ. Ի. Լենինը հատկապես սուր էր դնում այս հարցը, պարզաբանելով, որ ռուսական մարքսիստները չեն կարող հետևել 1890-ական թվականների արևմտաեվրոպական սոցիալ-դեմոկրատական կուսակցություններին, որոնք իրենց շարքերում հանդուրժում էին բուրժուազիայի հետ պրոլետարիատի համագործակցության քարոզով հանդես եկող օպորտունիստներին, որոնք հասարակության վերակառուցման մենաշնորհը տալիս էին բուրժուազիային, պրոլետարիատին թողնելով միայն իր «տնտեսական վիճակը» բարելավելու նպատակով հանդես գալու «օրինական իրավունքը»։ Միջազգային բանվորական շարժման մեջ այդ օպորտունիստական հոսանքը հանձին «էկոնոմիզմի» դրսևորում գտավ

նաև ռուսական սոցիալ-դեմոկրատիայի շարքերում, բացասելով բանվոր դասակարգի քաղաքական պայքարի և հեղափոխական մարքսիստական կուսակցության անհրաժեշտությունը։

Օպորտունիստների դեմ մղվող անողիջում պայքարում Վ. Ի. Լենինը ռուսական մարքսիստներին համախմբեց բանվոր դասակարգի նոր տիպի կուսակցության մեջ։ Այդ կուսակցության սաղմը հանդիսացավ «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունը», որը ստեղծվեց Վ. Ի. Լենինի գլխավորությամբ Պետերբուրգում, 1895 թ. և որի շուրջը սկսեցին միավորվել երկրի բանվորական շարժման խոշորագույն կենտրոնների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները։ Պետերբուրգի «Պայքարի միությունը» գործունեություն ծավալեց ցենտրալիզմի սկզբունքով, խիստ կարգապահության հիման վրա, սերտ կապ հաստատելով բանվորական զանգվածների հետ։ «Պայքարի միությունը» առաջինն էր, որ գիտական սոցիալիզմի գաղափարները միացրեց բանվորական շարժման հետ։

Բանտը և աքսորը խափանեցին «Պայքարի միության» գործունեությունը։ Աքսորում Վ. Ի. Լենինը 1898 թ. գրեց «Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները» աշխատությունը, որտեղ հանգամանորեն բացահայտված են Ռուսաստանում բանվորական շարժման պրոբլեմները։ Քայլ առ քայլ ընթանալով պրոլետարական կուսակցության ծրագրի, ստրատեգիայի և տակտիկայի մշակման ուղիով, ռուսական մարքսիստները մերկացնում էին օպորտունիստների սոցիալ-ռեֆորմիզմը, նախապատրաստում բանվոր դասակարգի մարտական կուսակցության կազմակերպումը։

Ռուսական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (ՌՍԴԲԿ) հիմնադրումը հռչակվեց նրա I համագումարում, որը տեղի ունեցավ 1898 թ. Մինսկում՝ մի քանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ։ Աքսորում գտնվող Վ. Ի. Լենինը իր հավանությունը տվեց համագումարի ընդունած «Մանիֆեստի» հիմնական դրույթներին։ Նա միաժամանակ նշում էր, որ համագումարը չկարողացավ ստեղծել միասնական կուսակցություն. չկար ո՛չ ծրագիր, ո՛չ էլ կանոնադրություն, չհաղթահարվեց բանվորական շարժման տարընթացությունը, որը չէր կարող պարարտ հող չլինել «էկոնոմիստների» կազմալուծիչ գործունեության համար։ Կուսակցության ստեղծման հարցը, այսպիսով, փաստորեն մընում էր առկախ։

Կուսակցության գաղափարական և կազմակերպական նախապատրաստման գործում մեծ դեր խաղաց «Իսկրան»։ Դեռևս աքսորում մշակելով կոմունիստական կուսակցության ստեղծման պլանը, Վ. Ի. Լենինը բացահայտում է համառուսական քաղաքական լրագրի դերը, ցույց տալիս, որ մինչև համազումար հրավիրելը միայն նրա միջոցով է հնարավոր մի միասնական դրոշի շուրջը համախմբել երկրի տարբեր վայրերում գտնվող և «տնայնագործորեն» աշխատող սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները։ Եվ իրոք, անլեգալ «Իսկրան» դարձավ այն կորիզը, որի շուրջը կազմավորվեց կուսակցությունը։ Վիթխարի նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի «Ի՞նչ անել» աշխատությունը, որտեղ մինչև վերջ մերկացվեցին բանվորական շարժման մեջ օպորտունիզմի, մասնավորապես «էկոնոմիզմի» գաղափարական ակունքները և նոր խնդիրներին համեմատ հարստացվեց պրոլետարիատի դասակարգային պայքարի բնույթի ու ձևերի վերաբերյալ մարքսիստական ուսմունքը։ Ընդհան-

բացնելով սոցիալ-դեմոկրատական պատմության նախորդ ամբողջ շրջանի փորձը, Լենինը գտավ, որ բանվորական շարժման հաջողության միակ երաշխիքը կազմակերպությունն է, պրոլետարիատի մարտական քաղաքական կուսակցությունը։ «Տվեք մեզ հեղափոխականների կազմակերպություն,— նշում էր Լենինը,— և մենք շուռ կտանք Ռուսաստանը»։

Հեղափոխականների այդպիսի կազմակերպություն ստեղծվեց ՌՍԴԲԿ II համագումարում, որը նշանավորեց նոր փուլ ոչ միայն ռուսական, այլև միջազգային բանվորական շարժման պատմության մեջ։

ՌՍԴԲԿ II համագումարը տեղի ունեցավ 1903 թ. հուլիսի 17 (30)-ից մինչև օգոստոսի 10 (23)-ը, սկզբում Բրյուսելում, իսկ այնուհետև՝ Լոնդոնում։ Համագումարի հիմնական նպատակն էր ստեղծել իսկական կուսակցություն այն սկզբունքային և կազմակերպական հիմունքներով, որ առաջադրել և մշակել էր «Իսկրան»։ Համագումարը միատարր չէր, ինչպես միատարր չէին և չէին էլ կարող լինել ո՛չ սոցիալ-դեմոկրատիան, ո՛չ էլ նրան ծնող պրոլետարիատը։ Ահա թե ինչու Վ. Ի. Լենինը և նրա շուրջը համախմբված կայուն իսկրայականները ստիպված էին կուսակցության ծրագրային ու կազմակերպական սկզբունքների համար անդիջում պայքար մղել օպորտունիստների՝ «էկոնոմիստների», բունդականների, ինչպես նաև ցենտրիստների, հաշտվողականների, անհետևողականների՝ «փափուկ» իսկրայականների դեմ։ Զարգացնելով մարքսիզմը պատմական նոր պարագաներում, Վ. Ի. Լենինը հարստացրեց բանվոր դասակարգի առաջավոր ջոկատի՝ կոմունիստական կուսակցության մասին մարքսիստական ուսմունքը, կոնկրետ այդ պարագաներին համեմատ սահմանելով նրա մերձավոր և հետագա անելիքները, մշակելով նրա ամենօրյա կյանքն ու գործը նորմավորող կանոնադրական սկզբունքներ։ Հասարակական զարգացման առօրյայի համակողմանի խոր գիտական վերլուծության հիման վրա Վ. Ի. Լենինը զարմանալի հեռատեսությամբ բացահայտեց, պարզաբանեց, կուսակցության ու պրոլետարական զանգվածների համար տեսանելի դարձրեց այն խնդիրները, որոնք պետք է վճռական դեր խաղային բանվոր դասակարգի համար։

ՌՍԴԲԿ II համագումարն ընդունեց կուսակցության մարքսիստական-լենինյան ծրագիրը՝ ինքնակալության, կալվածատերերի և կապիտալիստների իշխանության կործանման, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման համար մղվող պայքարի ծրագիրը։ Այն ամրապնդեց բոլշևիզմի հաղթանակը «էկոնոմիստների» նկատմամբ, ծանր հարված հասցրեց միջազգային սոցիալ-դեմոկրատիայում նրանց համախոհներին։

Ինչ որ չափով կռահելով, որ երկու դարերի սահմանագլխին հասարակական զարգացման պրոցեսում, մասնավորապես կապիտալիստական արտադրության կազմակերպման և բանվոր դասակարգի ու բուրժուազիայի միջև հարաբերությունների ոլորտում կատարվում են տեղաշարժեր, II Ինտերնացիոնալի պարագլուխները հանգում էին այն սխալ հետևության, թե գնալով իբր մեղմանում են շահագործող և շահագործվող դասակարգերի հակասությունները, որ կապիտալը իբր կարող է բարելավել պրոլետարների տնտեսական վիճակը և «խելացի գործելու դեպքում» բանվորները կարող են օգտվել կապիտալից։ Ավելի խորանալով իրենց այս «հայտնագործություններում», օպորտունիստները ի վերջո ամբողջովին հրաժարվեցին մարքսիզմից, շահագործող ու շահագործվող դասակարգերի հակամարտության

մասին մարքսյան դրույթը փոխարինելով պրոլետարիատի և բուրժուազիայի «շահերի ընդհանրության» վարդապետությամբ։ Նրանք հրաժարվեցին պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարից, «վնասակար գործ» հայտարարեցին բանվոր դասակարգի քաղաքական պայքարը, առաջ քաշելով բուրժուազիայի տիրապետությամբ հանդերձ առանձին վերափոխությունների միջոցով «հասարակությունը բարելավելու», արհմիությունների օգնությամբ «ոչ բարեխիղճ» կապիտալիստների վրա ճնշում գործադրելու «ծրագրային» դրույթներ։ Օպորտունիստները մարքսիզմը հնացած հայտարարեցին, ճգնելով ապացուցել, թե նա իբր ճիշտ է եղել XIX դ. 50-ական թվականների պայմաններում և որ այն չի կարող պատասխանել նոր հանգամանքներում ծնվող հասարակական մտահոգություններին։ Նույնիսկ բանավեճի հարց դարձրին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի կողմից առաջադրված պրոլետարիատի դիկտատուրան որպես աշխարհի սոցիալիստական վերափոխության կարևորագույն միջոց ընդունելու հարցը, պրոլետարական հեղափոխության մարքսյան տեսությունը փոխարինելով հասարակության «աստիճանական զարգացման», «խաղաղ վերաճման», «ստադիաների» և առաջին հայացքից «գիտական տեսքով» ներկված այլ դոգմաներով։

Վ. Ի. Լենինի մեծությունը նաև այն էր, որ նա հետևողականորեն մերկացրեց օպորտունիզմի բոլոր տարատեսակները, բանվոր դասակարգի ավանգարդի՝ կոմունիստական կուսակցության ծրագրի մեջ վերականգնեց պրոլետարական դիկտատուրայի մարքսիստական պահանջը, այն դարձնելով կապիտալիզմի դեմ բանվոր դասակարգի պայքարի հիմնական նպատակը։ Բայց Վ. Ի. Լենինը չսահմանափակվեց սոսկ այդ ծրագրային դրույթի վերականգնմամբ։ Ուսումնասիրելով տվյալ ժամանակի Ռուսաստանի հասարակական զարգացման շարժիչ ուժերը, նա բացահայտեց պրոլետարական հեղափոխության հաջողությունն ապահովող կարևոր գործոնները։ Վ. Ի. Լենինը հանճարեղորեն կանխատեսեց, որ Ռուսաստանում պրոլետարական հեղափոխության հաջողությունը սերտորեն կապված է երկրի բնակչության մեծ մասի՝ գյուղացիական միլիոնավոր զանգվածների և ցարիզմի լծի տակ հեծող ժողովուրդների սոցիալական ու ազգային ազատագրության հետ։ Հենց սա էր պատճառը, որ կուսակցության առաջին իսկ ծրագիրը կարևոր տեղ հատկացրեց և՛ ագրարային, և՛ ազգային հարցերին։

Լենինյան ներդրումը այնպիսի նորություն էր, որի նշանակությունը ցայտուն դրսևորվում է նաև մեր ժամանակներում՝ գաղութատիրության լրիվ կործանման և Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի երկրներում ազգային-ազատագրական հեղափոխությունների հաղթական ավարտի դարաշրջանում։ II Ինտերնացիոնալի ռեֆորմիստական գործիչները, որպես կանոն, անտեսում էին ագրարային հարցը. իրենց հայտարարելով «բանվորների ներկայացուցիչներ», նրանք արժանապատվությունից ցածր էին համարում զբաղվել գյուղացիությամբ, նրա մեջ չտեսնելով հեղափոխական ոչ մի պարունակություն։ Պատահական չէ, որ ձախ-ավանտյուրիստները, մասնավորապես Տրոցկին ու նրա պերմանենտ հեղափոխության տեսության կողմնակիցները, գյուղացիությանը դասում էին պրոլետարիատի թշնամիների շարքում, որի դեմ էլ պրոլետարիատը իբր թե պետք է մղի իր «վերջին կռիվը»։ Օպորտունիստները քիչ չէին պղտորել նաև ազգային հարցը։ Այստեղ ևս նրանց կողմից բացակայում էր դասակարգային մոտեցումը։ Առաջ քաշելով

ազգային հարցում այսպես կոչված կուլտուր-ազգային ավտոնոմիայի տեսությունը և փորձելով հարցը լուծել առանց ձեռք տալու բուրժուազիայի իշխանությանը, II Ինտերնացիոնալի գործիչների առաջադրած ծրագիրն, ըստ էության ավելի շուտ ձեռնտու էր բուրժուազիային, մանավանդ տիրապետող ազգի բուրժուազիային, որը իրեն ենթակա այլազգի ժողովուրդներին կեղեքելու գործում ստանում էր «բանվորական կուսակցության» օժանդակությունը։

Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ ինչպես ագրարային, այնպես էլ ազգային հարցերը, որպես պրոլետարական հեղափոխության ռեզերվների, երկրում առկա հեղափոխական հնարավորությունների օգտագործման խնդիրներ, պետք է իրենց տեղը գրավեն կուսակցության ծրագրում՝ դրանով իսկ հաստատուն տեղ ստանալով նաև կուսակցության քաղաքականության մեջ։ Ռուսաստանում դասակարգային ուժերի հարաբերակցության խոր վերլուծությունից էլ բխում էր երկրում հեղափոխության զարգացման երկու փուլերի՝ բուրժուա-դեմոկրատական և սոցիալիստական փուլերի լենինյան կանխատեսումը, որը լիովին հաստատվեց պատմության կողմից։

ՌՍԴԲԿ II համագումարը, այսպիսով, ընդունելով կուսակցության ծրագիրը, պրոլետարիատի և նրա առաջավոր ավանգարդի ուժերն ուղղեց կոնկրետ նպատակի՝ հեղափոխության միջոցով հասարակության սոցիալիստական վերակառուցմանը։

Համագումարում տեղի ունեցավ բաժանում մի կողմից Վ. Ի. Լենինի գլխավորած հետևողական, հեղափոխական մարքսիստների, մյուս կողմից՝ օպորտունիստների միջև։ Լենինի կողմնակիցները, որոնք կուսակցության կենտրոնական մարմինների ընտրությունների ժամանակ մեծամասնություն ստացան, սկսեցին կոչվել բոլշևիկներ, իսկ փոքրամասնություն կազմած օպորտունիստները՝ մենշևիկներ։ Համագումարից անմիջապես հետո մենշևիկները բացահայտորեն դուրս եկան համագումարի որոշումների դեմ, հրաժարվեցին կուսակցության ծրագրի և կանոնադրության պահանջներից, հանդես եկան նրա գաղափարական ու կազմակերպական սկզբունքների, ստրատեգիայի ու տակտիկայի դեմ։ Ռուսական սոցիալ-դեմոկրատիան փաստորեն երկճեղքվեց բոլշևիկների կուսակցության և մենշևիկների կուսակցության։

Բոլշևիկների կուսակցությունը ինտերնացիոնալիստական կուսակցություն է, համազգային ըստ իր գաղափարախոսության, կառուցվածքի, գործողության բնույթի։ Սկզբից ևեթ այն միավորել է իսկական պրոլետարական ինտերնացիոնալիստներին, երկրի բազմազգ պրոլետարիատի և բոլոր աշխատավոր ժողովուրդների լավագույն զավակներին։

Անդրկովկասում դեռևս նախահամագումարյան շրջանում ձևավորվել էին լենինյան-իսկրայական կազմակերպությունները և իսկրայական մամուլը, որոնք հսկայական դեր խաղացին կովկասյան սոցիալ-դեմոկրատիան Վ. Ի. Լենինի շուրջը համախմբելու ասպարեզում։ Ռուս, ուկրաինացի, լատիշ, վրացի, հրեա և այլ ազգերի ներկայացուցիչների հետ միասին Ռուսաստանում նոր տիպի կուսակցության ստեղծման մեջ իրենց մեծ ավանդն են ներդրել նաև հայ ժողովրդի զավակները։ ՌՍԴԲԿ II համագումարին որպես պատգամավորներ մասնակցեցին Բ. Կնունյանցը և Ա. Ջուրարյանը, որոնք այնտեղ հանդես էին գալիս լենինյան դիրքերի պաշտպանությամբ։ Մերժելով Ռուսաստանի բոլոր ոչ ռուս ժողովուրդների անունից՝ ազգային հարցում «ավարտուն» ծրագրով հանդես գալու բունդականների հավակնությունները, Բ. Կը-

նունյանցը կրքոտ պաշտպանեց կուսակցությունը պրոլետարական սկզբունքի ոգով կառուցելու լենինյան պլանը։ «Ես գտնում եմ,— հայտարարեց նա, որ կուսակցության յուրաքանչյուր անդամ հանդիսանում է ամբողջ Ռուսաստանի, ամբողջ պրոլետարիատի ներկայացուցիչ»։ Լենինը բարձր էր գնահատում Կնունյանցի ծառայությունները։ «Մի քայլ առաջ, երկու քայլ ետ» գրքում, կուսակցության մեջ առաջացած սկզբունքային տարաձայնությունների իմաստը բացահայտելով հանդերձ, Լենինը գրում է. «Մենք խորհուրդ կտայինք բոլորին, ովքեր ուզում են ինքնուրույն վերլուծել պառակտման պատճառները և գտնել նրա արմատները համագումարում, կարդալ և վերստին կարդալ ընկ. Ռուսովի ճառը» («Ռուսովը» Բ. Կնունյանցի ծածկանունն էր)։

Զարգացնելով կոմունիստական կուսակցության ավանգարդային դերի մասին մարքսիստական դրույթը, Վ. Ի. Լենինը նշում է, որ կուսակցությունը հանդիսանում է բանվոր դասակարգի հեղափոխական կազմակերպության բարձրագույն ձևը։ Այն ընդգրկում է կոմունիզմի գործին նվիրված հեղափոխական բանվորներին, ինչպես նաև աշխատավորական մյուս զանգվածների լավագույն ներկայացուցիչներին։ Կոմունիստական կուսակցությունը կառուցված է դեմոկրատական ցենտրալիզմի հիմքի վրա, որն ապահովում է ներկուսակցական դեմոկրատիան, անդամների ակտիվ մասնակցությունը ներկուսակցական կյանքին, կոլեկտիվ ղեկավարությունը, բոլորի համար ընդհանուր երկաթյա դիտակից կարգապահությունը, փոքրամասնության ենթարկվելը մեծամասնությանը, վերից վար ղեկավարությունը։ Կոմունիստական կուսակցությունը չի կարող հանդուրժել ֆրակցիոնականությունը, օպորտունիզմը, ռևիզիոնիզմը, բուրժուական ու մանրբուրժուական գաղափարախոսության դրսևորումները և անդադրում պայքար է մղում իր շարքերի գաղափարական ու կազմակերպական անաղարտության համար։ Վ. Ի. Լենինի կողմից նոր տիպի պրոլետարական կուսակցության տեսական, քաղաքական և կազմակերպական հիմունքների, կուսակցական կյանքի նորմաների, կուսակցական ղեկավարության սկզբունքների մշակումը անգնահատելի ներդրում էր բանվոր դասակարգի կուսակցության մարքսիստական ուսմունքի մեջ։

Հաղթահարելով գաղափարական և կազմակերպական տարընթացությունը, օպորտունիզմի դեմ անհաշտ պայքարում Լենինը և նրա կողմնակիցները ՌՍԴԲԿ II համագումարում ձևավորեցին բոլշևիզմը, ստեղծեցին Ռուսաստանի բանվոր դասակարգի մարտական կուսակցությունը, որը դարձավ իսկական օրինակ մյուս երկրների հեղափոխական մարքսիստական կուսակցությունների համար։

* * *

Յոթ տասնամյակ է մեզ բաժանում այն օրերից, երբ Լենինի գլխավորած հեղափոխական մարտիկների ջոկատը սկիզբ դրեց Ռուսաստանի կոմունիստական կուսակցությանը։ Յոթ տասնամյակը ժամանակի տեսակետից այնքան էլ մեծ շրջան չէ շահագործողների դեմ շահագործվողների բազմադարյան պայքարում։ Բայց այդ յոթ տասնամյակի ընթացքում կոմունիստների կուսակցության առաջնորդությամբ հասարակական կյանքում կատարվել են այնպիսի՜ արմատական հեղափոխական փոփոխություններ, որոնք իրենց

նախադեպը չունեն հասարակության զարդացման անցյալի որևէ շրջանում։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ մեր երկրի բանվոր դասակարգը, դաշնակցած աշխատավոր գյուղացիության հետ, կատարեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը՝ հաստատեց պրոլետարիատի դիկտատուրա, աշխատավոր զանգվածների ուժերը համախմբեց կառուցելու նո՛ր կյանք, նո՛ր հասարակարգ։ Վիթխարի են տնտեսության ու մշակույթի զարգացման բնագավառում սովետական ժողովրդի հաջողությունները։ Մեր երկրում ստեղծվել են ժամանակակից հզոր արդյունաբերություն և գյուղատնտեսություն, կուլտուրական հեղափոխության շնորհիվ գիտության ու տեխնիկայի, արվեստի ու գրականության նվաճումներն ի սպաս են դրվել ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների հոգևոր կյանքի բարգավաճմանը։ Սովետական ժողովուրդը իր նվիրվածությունը սոցիալիստական հայրենիքին, կոմունիստական կուսակցության գործին դրսևորեց 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում՝ պարտության մատնելով ֆաշիզմը, որ սպառնում էր ՍՍՀՄ ազատությանը և անկախությանը։

Կենսագործելով կոմունիստական կուսակցության ծրագիրը, սովետական ժողովուրդը կառուցել է զարգացած սոցիալիստական հասարակություն և այժմ ընթանում է կոմունիզմի կառուցման լենինյան ուղիով։ ՍՄԿԿ ծրագրում, XXIII և XXIV համագումարների որոշումներում և ՍՍՀՄ 50-ամյակի մասին ընկ. Լ. Ի. Բրեժնևի զեկուցման մեջ գիտականորեն բացահայտված են արդի հասարակական զարդացման հիմնական խնդիրները, մշակված են ՍՍՀՄ հզորության հետագա ամրապնդման գլխավոր պրոբլեմները։ Պատմական այդ փաստաթղթերում իր հետագա զարգացումն է գտել կուսակցության մասին լենինյան ուսմունքը։ Զարդացման արդի փուլում ավելի է աճում կուսակցության ղեկավար դերը, ավելի է մեծանում կուսակցական կազմակերպությունների գործունեության նշանակությունը և՛ գաղափարական աշխատանքում, և՛ սոցիալիստական արտադրությունը նոր պահանջների ոգով կազմակերպելու ու կատարելագործելու ասպարեզում։ Մեր երկրի բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը՝, ժողովրդական մտավորականությունը պայքարում են ՍՄԿԿ XXIV համագումարի կանխագծումների. ժողովրդական տնտեսության զարգացման 9-րդ հնգամյակի երրորդ, վճռական տարվա պլանների կատարման համար։

ՍՍՀՄ հզորության ամրապնդումը արդի ժամանակի այն գործոններից է, որոնք ըստ էության ունեն միջազգային բնույթ։ Այն կայուն երաշխիք է ժողովուրդների միջև խաղաղ գոյակցության, փոխըմբռնման ու բարիդրացիական հարաբերությունների և խթանում է բանվորական ու ազգային-ազատագրական շարժումները։ Եվ միանգամայն օրինաչափ է, որ բոլշևիզմի պատմական փորձը, Ռուսաստանում նոր տիպի մարքսիստական կուսակցության ավանդույթները ավելի լայն կիրառություն են գտնում համայն աշխարհում։ Դրա վառ ապացույցներից է կոմունիստների գլխավորությամբ ժողովուրդների սոցիալիստական համագործակցության ստեղծումը և կապիտալիստական երկրների բանվոր դասակարգի պայքարը կապիտալի տիրապետության դեմ։

Իր կազմավորման առաջին իսկ օրերից բոլշևիզմը, որպես փարոս, ցույց է տալիս միջազգային բանվորական հեղափոխական շարժման ճիշտ ճանապարհը։ Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը, հավատարիմ պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներին, զարգացնում

է բոլշևիզմի՝ ավանդույթները, հետևողական պայքար մղում ընդդեմ բուրժուական գաղափարախոսության, ռեֆորմիզմի, աջ և «ձախ» օպորտունիզմի, գործադրում բոլոր միջոցները ապահովելու միջազգային բանվորական շարժման միասնությունը։ Նա սերտ կապի մեջ է բոլոր մարքսիստական-լենինյան կուսակցությունների հետ, օգնում է նրանց զինվելու բոլշևիզմի փորձով, կիրառելու այն տվյալ երկրի կոնկրետ իրադրությանը համեմատ։ Պատմությունը չգիտե ոչ մի կուսակցություն, քաղաքական ոչ մի միավորում, որ ունենար այնպիսի միջազգային հեղինակություն, ինչպիսինը կոմունիստներինն է։ Պատահական չէ, որ ամեն տարի նոր ուժեր են համախմբվում նրանց դրոշի ներքո, նոր մարտիկներ են համալրում նրանց շարքերը։

ՌՍԴԲԿ II համագումարի 70-ամյակը կարևոր գաղափարական ու քաղաքական իրադարձություն է մեր կուսակցության, ամբողջ սովետական ժողովրդի կյանքում։ Հանրագումարի բերելով անցած պատմական ուղու արդյունքները, ՍՄԿԿ-ը ոգեշնչում է սովետական մարդկանց հանուն նոր սրխրադործությունների, հանուն մեր երկրի հետագա բարգավաճման։

ВАЖНАЯ ИСТОРИЧЕСКАЯ ВЕХА

А. П. СИМОНЯН
Доктор исторических наук

Резюме

II съезд РСДРП, 70-летие которого исполняется в июле-августе с. г., подытожил целый период в развитии русской социал-демократии и создал в России марксистскую партию нового типа, которая стала подлинным авангардом пролетариата и образцом служения интересам трудового народа. Возникновение рабочего движения в России и его рост привели в конечном итоге к созданию революционной партии рабочего класса. Огромна заслуга В. И. Ленина в деле идейной и организационной подготовки партии, в непримиримой борьбе против ревизионизма, в частности — оппортунизма «экономистов».

Велико международное значение исторического опыта большевизма, отражающегося в наше время в росте и укреплении рядов международного рабочего и коммунистического движения.